ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՉԷԽՈՍԼՈՎԱԿԻԱ (1918-1920). ԵՐԿՈՒ ՆՈՐԱՆԿԱԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՊԵՐԸ

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ
artsvi@yahoo.com

1918ին Եւրոպայի քարտէզին յայտնուեց մի նոր պետութիւն՝ Չէխոսլովակիան։ Նոյն թուականին հռչակուեց նաեւ Հայաստանի Հանրապետութիւնը։ Պատահական չէ, որ երկու նորանկախ հանրապետութիւնները որոշ չափով հետաքրքրուել են մէկը միւսով, որն արտայայտուել է միջպետական յարաբերութիւններ հաստատելու փորձերով։

Հայերն առաջիններից են արձագանգել Չէխոսլովակիայի անկախութեանը՝ մամուլում[1] եւ առանձին մարմինների կողմից։ 1918ի Սեպտեմբերին, Ամերիկայի Հայ Ազգային Միութիւնը Դաշնակից պետութիւնների կողմից Չէխոսլովակիայի ճանաչման առթիւ հետեւեալ շնորհաւորական հեռագիրն է ուղարկել նրա ժամանակաւոր կառավարութեանը.

«*Սեպտ. 13, 1918*

Չէխօ-Սլօվաքներու Ազգային Խորհուրդին,

717, 14 փողոց, Ուաշինկթըն,

Ամերիկայի Հայ Ազգային Միութիւնը իր սրտագին շնորհաւորութիւնները կը յղէ ձեզի ձեր քաջարի ազգին անկախութեան իրաւունքին ճանաչման առթիւ, եւ կը մաղթէ, որ ձեր ազնիւ ճիգերը յաջողութեամբ պսակուին մեր մեծ Դաշնակիցներու բանակներու գործակցութեամբ»[2]։

Ի պատասխան, Միութիւնը Չէխոսլովակ ժամանակաւոր կառավարութեան վարչապետ, չէխ ազգային պայքարի եւ անկախութեան մեծ ռահվիրայ Տոմաշ Գարրիգ Մասարիկից (1850-1937) ստացել է հետեւեալ նամակը.

«*Հոկ. 16, 1918*

Հայ Ազգ. Միութիւն Ամերիկայի,

Հաճեցէք ընդունիլ մի սրտագին շնորհակալութիւնները ձեր շնորհաւորական հեռագրին համար։ Մեր Ազգային բաղձանքներու յաջողութիւնը պիտի նշանակէ բոլոր փոքր եւ հարստահարուած ազգերու Դատին յաջողութիւնը։ Ձեր տառապեալ ազգին ազատութեան եւ միացման համար կը տածենք ամենանկեղծ մաղթանքները։

Ձերդ ամենայն անկեղծութեամբ

Թ. Ս. ՄԱՍԱԼԻՔ (sic)»[3]:

Չէխոսլովակիայի անկախութեան տիրանալուց յետոյ տարբեր երկրների հայեր սկսել են համեմատութիւններ կատարել այդ երկրի եւ հայութեան միջեւ[4]: «*Չէխերը Աւստրիոյ Հայերն են,*- գրել է Վիեննայում հաստատուած մտաւորական Զենոբ Սուրէնեանը:- *Դարերու շրջանին մէջ մեզի նման կաշկանդուած ժողովուրդ մը՝ տոկուն եւ գործունեայ, գեղարուեստասէր եւ շինարար, քաղաքակրթութեան ամենաբարձր ոլորտներուն հասած մարդիկ հասցուցած ազգ մը՝ որ տիեզերական պատերազմին ամբողջ տեւողութեան միջոցին չկորսնցուց բնաւ իր հաւատքը՝ իր անկախութեան ապահովումի մասին: Վեց միլիոն հաշուող այս ժողովուրդը, ճիշդ է, Քիւրտ աշիրէթներու հարստահարութիւններ չի ճանչցաւ, բայց Աւստրիական բռնակալութիւնը Տաճիկ ռեժիմէն շատ ալ չէր տարբերեր (վերջին կարծիքն, անշուշտ, վիճելի է - Ա.Բ.)»:* Եւ ապա՝ «*Մենք՝ Հայերս, քիչ ատենէն պիտի կոչուինք անկախ ազգերու ընտանիքին մէկ անդամը ըլլալու: Անմոռանալի Վարուժան կը գրէր տասը տարի առաջ. 'Հայը պիտի ապրի ժողովուրդներու սիրազօր շղթային մէկ ոսկի օղակն ըլլալու համար:' Հպարտ փափաք, փաղաքշական իղձ: Բայց ո՞ւր գտնել մեր Մազարիքները...*»[5]:

Սոյն համեմատութիւնն, անշուշտ, դիպուկ չէ, եւ ցեղասպանուած հայ ժողովուրդն ի վիճակի չէր Մասարիկներ ունենալ, ուստիեւ նրա ձեռք բերած անկախութիւնը նոյնպէս եղաւ չափազանց կարճատեւ: Սակայն նորահոչակ Չէխոսլովակիան մշտապէս նրա համար եղաւ որպէս օրինակելի երկրի տիպար: Հայ մամուլը երբեմն ներկայացրել է այն եւ նրա ժողովրդին ներկայացնող յօդուածներ, այդ թւում՝ հայ հեղինակների: Այսպէս, 1921ին պոլսահայ մամուլում լոյս տեսած Յովհաննէս Յակոբեանի յօդուածը ներկայացրել է Չէխոսլովակիայի՝ որպէս անկախ երկիր եւ ազգ կազմաւորման կարեւոր իրողութիւնները (հողային հարցը, Ամերիկայից կազմակերպուած ներգաղթը, ճարտարարուեստական փորձարկումները, ազգային գաղափարը եւն.[6]): Երբեմն հայ յօդուածագիրները չափազանցութեան են հասել՝ պատեհ թէ անպատեհ առիթներով զուգահեռներ անցկացնելով հայերի եւ չէխոսլովակների միջեւ: Նիւ Եորքի *Երիտասարդ Հայաստան* պարբերաթերթում նրա խմբագիր Ստեփան Սապահ-Գիւլեանը անդրադառնալով հայերի եւ չէխոսլովակների քաղաքական պայմաններին՝ կատարել է ուշագրաւ ընդհանրացումներ. «*Չէխօ-Սլօվակների պաշտպան պետական շրջանները եւ հրապարակագիրները, այդ քաջ եւ արժանաւոր ազգի անկախութեան տեսակէտից, իրենց գլխաւոր թեզերից մէկն էլ այն են արել, որ այս ազգը, որպէս ամբողջութիւն, պատերազմական դրութեան մէջ է գտնուած եղել տիրող կառավարութեան՝ Աւստրօ-Հունգարիայի դէմ: Ու մի առ մի վերյիշում են ոչ՝ միայն Չէխօ-Սլօվակների խաղացած դերը*

պատմութեան մէջ, նրանց մշակութային ազգ լինելը, այլեւ թէ ինչ դեր են կատարել ռազմադաշտերի զանազան ճակատներում՝ թէ՛ Արեւելեան եւ թէ՛ Արեւմտեան: Սրա հետ միասին չեն մոռանում արտացոլացնելու հոգեկան այն դժգոհ վիճակը, ապստամբելու ցանկութեան այն տրամադրութիւնը, որ այս բոպէիս ունին Չէխօ-Սլովակները իրենց մայր երկրի մէջ՝ ճնշողի լուծի տակ կքած: ....Եթէ մի ազգ կայ, որ դարերի ընթացքում պատերազմական վիճակի մէջ է գտնուել իր տիրապետողի դէմ՝ դա Հայ Ազգն է, իր ամբողջութեամբ: Իսկ մեր եւ Թուրքի միջեւ պատերազմական դրութիւն ստեղծուել է ո՛չ թէ այս պատերազմի ընթացքում, մանաւանդ վերջին օրերում, ինչպէս որ Չէխօ-Սլովակների փոխ-յարաբերութիւնն է եղել. այլ մերը գալիս է է՛լ աւելի հին թուականներից: Առ նուազն 32 տարի կայ, որ Հայ Ազգը ո՛չ թէ կրաւորական, մշակութային կռուի է բռնուել իր հարստահարող, կործանող Պետութեան-Ազգի դէմ, այլ ներգործական: ...Այս իրողութիւններն է, որ մեր բարեկամները բնաւ չեն մատնանշում, երբ համանման իրողութիւններ գովասանքով վեր են հանում Չէխօ-Սլովակների կեանքից: ....Բոլոր նրանք, որոնք Չէխօ-Սլովակների եւ Իւգօ-Սլաւների արդար Դատն են պաշտպանում, մեր լիակատար գնահատանքն ունեն եւ գտնւում են ուղիղ թեզի վրայ: Բայց երբ հարցը դառնում է Հայերի, Հայկական Դատի վրայ, այդ թեզերը մէջտեղ չեն քաշւում եւ ուժեղ կերպով պաշտպանւում. եղածներն էլ ա՛յնքան անգոյն, երկչոտ միտումով են երեւան գալիս, որ լիակատարութեան դրոշմ չեն կրում իրենց վրայ»[7]:

Ուշագրաւ է, որ Չէխոսլովակիայի հետ զուգահեռներ կատարել են ոչ միայն հայերը, այլեւ օտարները: Այսպէս, ֆրանսիացի պատմաբան Ժաք Դը Մորգանը *Էնֆորմասիոն* թերթի 1918ի Հոկտեմբերի 30ի համարում հրատարակած «Հայաստանը պատերազմիկ եւ ինքնավար» յօդուածում պահանջել է, որ տէրութիւնները հայերին շնորհեն այն, ինչ շնորհեցին չէխոսլովակներին եւ հարաւսլաւցիներին[8]: Իսկ Լոնդոնի *Թայմզը*, 1919ի Օգոստոսի 13ին խօսելով դաշնակից տէրութիւններին հայերի ցուցաբերած օգնութիւնների մասին, մասնաւորապէս նշել է. «*Բոլոր փաստարկները, որոնք կապում են Լեհաստանը, Չէխո-Սլովակիան եւ Սերբիան ապագայի հետ կապուած մեր քաղաքական յոյսերին, միեւնոյն չափով վերաբերում են նաեւ Հայաստանին*», նշելով նաեւ, որ ինչպէս Լեհաստանում եւ Չէխոսլովակիայում, այնպէս էլ Հայաստանում կարող են արդարացիօրէն մեղադրել դաշնակիցներին, որոնք, ԱՄՆի պէս, Հայկական Հարցի կարգաւորման մէջ ունեն պատասխանատուութեան իրենց բաժինը[9]:

Ի դէպ, վերոնշեալ Ամերիկայի Հայ Ազգային Միութիւնը, ի դէմս իր պաշտօնաթերթ *Երիտասարդ Հայաստանի*ի խմբագիր Սապահ-Գիւլեանի,

նամակ է ստացել Ճապոնիայում բնակուող ազգային գործիչ, հրապարակախօս Դիանա Աբգարից, որտեղ նոյնպէս համեմատութիւններ կան չէխոսլովակների հետ։ Աբգարը գրել է. «*Պտուղն ծառից հասած կախ է, միայն Հայեր ձեռքեր ձգեն եւ վազեն. ինչո՞ւ չէք ձեռքեր ձգում եւ վազում, ինչու՞ ձեռքեր կցած նստած էք։ Չէխերն իւրեանց ազատութիւն հռչակեցին Ամերիկայի մէջ եւ իւրեանց դրօշակն բացան՝ բայց Հայեր պարապ նստին, թէեւ ժամանակն շարժելու հասած է։ Մինչեւ ո՞ր աստիճան պարապ նստիք. մի՞թէ Հայն իրաւունք չունի իր Ազատութեան, ինչպէս միւս ազգեր. մի՞թէ Հայաստան Հայի հարազատ Հայրենիքն չէ. ուրեմն ինչու՞ չէք Հայաստանի ազատութիւն պահանջում Ամերիկայի մէջ, ինչպէս որ Չէխերն արեցին։ Պահանջեցէք Հայ Ազգի Ազատութիւնն եւ դրօշակն բացէք. այժմ հասեալ է ժամն, միք կորցնել աջողակ պատեհութիւնն*»։ Այս նամակին ի պատասխան խմբագիրը գրել է. «*Ազնիւ Տիկին, Ամերիկայի Հայ Ազգային Միութիւնը ներքին գործերով սաստիկ զբաղուած ըլլալով՝ ժամանակ չունի Հայաստանի Անկախութեան մասին մտածելու...։ Չէխօ-Սլաւները կրնային ընել, որովհետեւ, իրենց Ազգի Անկախութեան խնդրէն դուրս՝ ուրիշ զբաղում չունէին*»[10]։

Այս ժամանակաշրջանին է վերաբերում մի ուշագրաւ ծրագիր հայ-չէխական հնարաւոր ռազմական գործակցութեան վերաբերեալ։ 1918ի գարնանը հայ հանրային գործիչ Լիպարիտ Նազարեանցը[11], որը գնացել էր բանակցելու Ռուսաստանի ժամանակաւոր կառավարութեան հետ՝ բժիշկ Յակոբ Զաւրիեւի[12] հետ, Մոսկուայում հանդիպել է պետական գործիչ Լեւ Տրոցկիին[13]։ Վերջինիս Նազարեանցը յիշեցրել է հայերին օգնելու տուած խոստումի մասին։ Տրոցկին առաջարկել է գործնական քայլերի մի ծրագիր ներկայացնել իրեն։ Այդ ժամանակ չէխոսլովակների բանակը (շուրջ 45,000 մարդ) պատրաստուել է Ծայրագոյն Արեւելքից հայրենիք վերադառնալ։ Բանակի վարչական մարմնի մէջ եղել է Նազարեանցին ծանօթ մի ռուս, որը վարչապետ Ալեքսանդր Կերենսկիի օրօք պաշտօնավարել է Ռազմական Նախարարութիւնում։ Ինչպէս գրել է Նազարեանցը, ինքը հարցրել է այդ ռուս ծանօթին, թէ ո՛րն է չէխերի անմիջական նպատակը։ «*Տուն երթալ,- պատասխանեց,- բայց եթէ յարմար գործ մը լինի, կարող են եւ մնալ։՝ Իսկ թիւրքերու դէմ կռուելու չե՞ն երթար։՝ Ինչո՞ւ չէ. իրենց փափագն է՝ օգտակար լինել դաշնակիցներուն, կռուելով ընդհանուր թշնամիին դէմ։ Ու քանի որ թիւրքերն ալ դաշնակիցներու թշնամիներն են, վստահ եմ, որ չէխ վարիչները չեն մերժեր ուղարկելու բանակը Կովկաս։ Միայն թէ բոլշեւիկները չարգիլէին ու միջոց տային Կովկաս անցնելու։՝ Իսկ եթէ Տրոցկին համաձայնի՞։՝ Այն ատեն գործը եղած է։՝ Պայմանաւորուեցանք, որ ան խօսի չէխերու հետ, իսկ ես՝ Տրոցկիի։ Փութացի վերջինիս մօտ ու հարցուցի, թէ ի՛նչ են*

մտադիր անելու չէիերու նկատմամբ։ ՏՈՒՆ կ'ուզեն երթալ,- ասաց,- բայց մեծ դժուարութիւններ կը պատճառեն մեզի։ Բացատրեցի իրեն մեր ծրագիրը, ու Տրոցկի հաւանութիւն տուաւ։ Ինչպէս գիտէք,- նկատեց ան,- ես կ'ուզէի, որ կովկասեան ճակատը պաշտպանուէր թիւրքերու դէմ, ու եթէ չէիերու միջոցով այդ յաջողուի, շատ գոհ կը լինեմ»[14]:

Տրոցկին, լինելով կողմնակից պատերազմի շարունակման, ըմբռնելով, որ այլեւս անհնար է պայքարել գերմանացիների դէմ ռուսական ճակատին վրայ, հաւանաբար ցանկացել է պահպանել գոնէ կովկասեան ճակատը, մանաւանդ որ այդ պիտի ազատէր բոլշեւիկներին չէիերի պատճառած «մեծ դժուարութիւններից»: Մի քանի օր յետոյ Ազգային Խորհրդի հրահանգով Նազարեանցն ուղեւորուել է Բերլին: Մէկ ամիս անց վերադառնալով իմացել է, որ չէիերն անցել են Վոլգայի շրջանը, եւ Տրոցկիի ակնարկած դժուարութիւններն արդէն սկիզբ են առել: Չէխական բանակի հայերին օգնութեան գալու ծրագիրը յօդս է ցնդել:

Պէտք է նաւե յիշել, որ Չէխոսլովակիան առաջին երկիրն էր, որն իր տնտեսական ներկայացուցիչներին ուղարկել է Հայաստան՝ հետազօտելու տնտեսական գործակցութեան հնարաւորութիւնները: Նորանկախ Չէխոսլովակիան, լինելով արդիւնաբերական երկիր, միշտ որոնել է նոր եւ տնտեսապէս թոյլ ժողովուրդներ՝ նրանց հետ առեւտրական յարաբերութիւններ մշակելու նպատակով: «*Յանկալի է,- գրել է չէխաբնակ մտաւորական Նշան Մարտիրոսեանը,- որ Հայաստանի եւ Չէխօ-Սլօւաքեան հանրապետութիւնները կարելի եղածին չափ շուտ առեւտրական եւ բարեկամական յարաբերութեան մէջ մտնեն եւ այս երկու երկիրներուն մէջ առեւտրական գրասենեակներ բանալով՝ հաստատեն հաղորդակցութիւններ, որոնք կրնան թէ՛ Հայերուն եւ թէ՛ մեր Չէխօ-Սլօւաք եղբայրներուն օգտակար ըլլալ: Դանուբ գետը, որ շատոնցէ ի վեր նաւարկելի է, արդէն միջազգայնացուած է, եւ Չէխօ-Սլօւաքներն ալ իրաւունք ունին իրենց նաւերով մինչեւ Սեւ Ծով գալու Դանուբի ճանապարհով։ Հետեւեաբար ապագային կարելիութիւնը եւ առիթը պիտի ունենանք անոնց հետ առեւտրական կապակցութիւն հաստատելու*»[15]:

Չէխոսլովակեան կառավարութեան ուշադրութիւնը Հայաստանի հանդէպ սկսուել է Կովկասում գտնուող չէխական տեսչութեան սպայ Ֆր. Իտիլիպի՝ 1920ի Փետրուարի 15ին Թիֆլիսից Չէխոսլովակիայի Արտգործնախարարութեանը յղած նամակից: Այնտեղ մասնաւորապէս նշուած է, որ Չէխոսլովակիայի կառավարութիւնը պէտք է ուշադրութիւն դարձնի Հայաստանի հետ դիւանագիտական եւ առեւտրական յարաբերութիւնների հաստատման վրայ, քանի որ Հայաստանում կան իրենց երկրին անհրաժեշտ բնական հումքեր, ինչպէս նաեւ Հայաստանը կարեւոր է որպէս Իրանի հետ տարանցիկ երկիր: Իտիլիպն առաջարկել է

Երեւանում բացել չէխական դիւանագիտական ներկայացուցչութիւն, որ լիազօր կը լինի նաեւ Բաքուի համար:

Պրահայում գործող Չէխոսլովակիայի Կենտրոնական Տնտեսական Յանձնաժողովը, որը տնտեսական մեծ ծրագրեր է մշակել գիւղատնտեսութեան եւ լեռնային արդիւնաբերութեան մէջ, 1920ի աշնանն իր լիազօր ներկայացուցիչներին ուղարկել է Հայաստան՝ տեղի դաշտն ուսումնասիրելու եւ հնարաւոր կապեր հաստատելու առաքելութեամբ: Այդ նպատակով նրանք 1920ի Սեպտեմբերին Հայաստան են գործուղել երկու չէխ պատուիրակներ՝ վերոյիշեալ յանձնաժողովի լիազօր, դրամատէր եւ առեւտրական Եարոսլաւ Կունին եւ իր տեղակալ Սլեզակին, որը մասնագիտութեամբ գիւղատնտես էր: Նրանց գալու նախօրէին Հայաստանի պաշտօնաթերթ *Յառաջը* ծանուցել է. «*Երեւան է գալիս Չէխօ-Սլօվակիայի Հանրապետութեան առեւտրական պատուիրակութիւնը, որի նպատակն է տնտեսական յարաբերութիւն ստեղծել Հայաստանի հետ: Պէտք է ամեն կերպ ջանալ յարաբերութիւն ունենալ Չէխօ-Սլօվակիայի հետ, որը նոյնպէս Հայաստանի նման նոր է կազմակերպւում եւ իբրեւ նոր ազատագրուած երկիր, իր շատ գծերով նման է Հայաստանին: Չէխօ-Սլօվակիայի պատուիրակութիւնը առաջարկութիւն է բերում ոչ միայն առեւտրական յարաբերութիւններ ստեղծելու նկատմամբ, այլ եւ պատրաստակամութիւն է յայտնում տալ Հայաստանին գործարանային կեանքի մասնագէտներ, նպաստել գործարանային կեանքի զարգացման եւ նոյնիսկ հիմնել Հայաստանում մի Չէխօ-Սլօվակեան գաղութ, երկրի տնտեսական ուժերը զարգացնելու համար: Չէխօ-Սլօվակները նպատակ ունեն յարաբերութիւնների մէջ հնարաւոր չափով խուսափել սպեկուլեատիւ էլէմէնտներից*»[16]:

Կունը եւ Սլեզակը Հայաստան են ժամանել 1920 Սեպտեմբերի 16ին, գնացքով, Մոսկուայից վերադարձող Հայաստանի պատուիրակներ Լեւոն Շանթի, Հ. Տէրտէրեանի եւ Լ. Զարաֆեանի հետ[17]: Յաջորդ օրն իսկ նրանք հանդիպում են ունեցել Արտաքին Գործերի նախարար Համօ Օհանջանեանի եւ Ֆինանսների նախարարի օգնական Շաթիրեանի հետ[18]: Հայաստանում նրանք մանրամասն ուսումնասիրել են երկրի տնտեսական ներուժը, գիւղական կեանքը, արտադրական հարստութիւնները: Երեւանից բացի չէխ պատուիրակները եղել են նաեւ Կարսում եւ Կաղզուանում: Այցելելով *Յառաջ* օրաթերթի խմբագրութիւն՝ նրանք յայտնել են, որ չնայած ծանր պայմաններին՝ երկրում նկատելի է եռուն ստեղծագործական աշխատանք[19]: Նրանք բացատրել են, որ Չէխոսլովակիայի վերջնական ազատագրումից յետոյ երկիրը ծրագրել է կապեր հաստատել բոլոր երկրների հետ՝ նաեւ այդպիսով տարածելով եւ ամրապնդելով իր անկախութիւնը: Իսկ Չէխոսլովակիայի Կենտրոնական Տնտեսական Յանձնախմբի նպատակն է եղել համագործակցական

հիմունքներով եւ միջոցներով արդիւնաբերական հաւաքական զարգացումով բարելաւել ժողովրդի տնտեսական դրութիւնը: Յանձնախումբը մասնաճիւղեր ունի բազմաթիւ երկրներում, ուստիեւ մտադիր է մի մասնաճիւղ էլ բացել Երեւանում, որ կը զբաղուի ապրանքների եւ աշխատուժի փոխանակմամբ: Այսինքն՝ Հայաստան ուղարկել չէխ մասնագէտների եւ չէխական դպրոցներում կրթութեան հնարաւորութիւն տալ հայ երիտասարդներին (մասնաւորապէս՝ լեռնային արդիւնաբերութեան բնագաւառում)[20]: Այս հարցերը քննուել են Հայկօօպի[21] շէնքում Կունի եւ Սլեզակի հետ կայացած հանդիպման ժամանակ, որին մասնակցել են Հայկօօպի վարչութիւնը, Ֆինանսների Նախարարութեանը կից Կօօպերացիոն Բաժնի վարիչ Ա. Վանցեանը եւ Շիրակի Վարչութեան անդամ Առաքելեանը: Խորհրդակցութիւնը քննել է Հայաստանի եւ Չէխոսլովակիայի միջեւ տնտեսական յարաբերութիւններ հաստատելու հարցը: Ծրագրուել է, որ Չէխոսլովակիայի Կենտրոնական Տնտեսական Բաժանմունքը Հայկօօպին կից եւ նրա միջոցով իրականացնի ապրանքափոխանակութիւնը, զարկ տրուի արդիւնաբերութեանը, Չէխոսլովակիան Հայաստան ուղարկի մեքենաներ, սարքաւորումներ, հիմնի գործարաններ եւ հաստատի մի փոքր չէխոսլովակեան համայնք: Առաջարկուել է Հայաստան ներմուծել շաքար, գիւղական արտադրանքներ, կօշկեղէն, ապակեղէն, երկաթեղէն, իսկ Հայաստանից Չէխոսլովակիա՝ հում նիւթեր, չոր միրգ, աղ եւն.[22]: Հոկտեմբերի 3ին կնքուել է առեւտրական համաձայնագիր Չէխոսլովակիայի եւ Հայաստանի կառավարութիւնների միջեւ, որը սակայն երկրում իշխանութիւնը նուաճած բոլշեւիկները ամիսներ անց պիտի համարէին իրականութեանը չհամապատասխանող եւ կասեցնէին նրա իրագործումը[23]:

Պատուիրակները Երեւանից Թիֆլիս են մեկնել Հոկտեմբերի 8ին՝ բժիշկ Իւան Աթաբեկեանի ուղեկցութեամբ: Հայաստանի նախարարների խորհրդի նախագահի կարգադրութեամբ Երեւանի ոգելից խմիչքների «Արարատ» գործարանից տրամադրուել է 60 շիշ հայկական խմիչք՝ Չէխոսլովակիայի նախագահ Մասարիկին յանձնելու համար: Որոշուել է, որ Չէխոսլովակիայի Կենտրոնական Տնտեսական Յանձնաժողովը, իսկ մէկ եւ կէս ամիս անց ընկերութեան բաժանմունք բացել Երեւանում. փոխլիազօր Սլեզակն այդուհետ յաճախ ճանապարհորդի Հայաստան, ուստիեւ նրան պէտք է մուտքի դիւրութիւններ տալ: Չէխ պատուիրակներն իրենց հետ տարել են Հայաստանի արտգործնախարար Օհանջանեանի ֆրանսերէն նամակը նախագահ Մասարիկին՝ գոհունակութիւն յայտնելով չէխական տնտեսական առաքելութեան շուրջ[24]:

Այս ժամանակաշրջանում ուշագրաւ է չէխերի հետ Հայաստանի Հանրապետութեան յարաբերութիւնները… Ծայրագոյն Արեւելքում։ 1920ի սկզբին Ծայրագոյն Արեւելքի հայութիւնը ձեռնամուխ է եղել հանգանակութիւններ կազմակերպել կարիքի մէջ գտնուող հայրենիքի համար։ 1920ի Յունուարին Սիբիրի Օմսկ քաղաքի հայերը տեղի չէխերի օգնութեամբ ապահովել են երկու վագոն (մէկ մարդատար եւ մէկ ապրանքատար), մէկի մէջ տեղաւորել չէխերից գնուած հագուստեղէն, միւսի մէջ՝ միքանի հայ ընտանիքների։ Գործի ղեկավարութիւնը յանձնուել է իրաւաբան, հանրային գործիչ Գրիգոր Զամոյեանին։ Հասնելով Խարբին՝ նա գործնական հանդիպումներ է ունեցել տեղի տարբեր երկրների պետական ներկայացուցնիչների, այդ թւում՝ չէխոսլովակեան ներկայացուցիչ բժիշկ Կլոսի հետ[25]։

1920ի աշնանը որոշ անձինք Հայաստանի կառավարութեան մօտ բարձրացրել են Չէխոսլովակիայում Հայաստանի հիւպատոս ունենալու հարցը։ Բնիկ երեւանցի առեւտրական Գեղամ Ամատունին, որ պատերազմից յետոյ հաստատուել է Վիեննայում, 1920ի Յունիսին այցելել է Պրահա եւ մտադրուել այնտեղ հաստատել հայ-չէխական առեւտրական ընկերութիւն, որը պէտք է զբաղուէր Հայաստան չէխական ապրանքներ արտածելով եւ հայկական ապրանքատեսակներ ներմուծելով Չէխոսլովակիա։ Այդ առթիւ Ամատունին 1920ի Սեպտեմբերի 14ին Վիեննայից նամակ է գրել Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան նախագահ Աւետիս Ահարոնեանին՝ նշելով, որ գրեթէ բոլոր պետութիւններն էլ առեւտրական գրասենեակներ ունեն Պրահայում, ուստիեւ հայ-չէխական ընկերութիւնն էլ պատրաստ է հայ առեւտրական գրասենեակը հայաստանեան կառավարութեան առաջարկած ձեւով կազմել Պրահայում՝ առանց հայոց հանրապետութեան վրայ ծանրանալու, այլ ընդհակառակը, հայ պետութեան շահերը պաշտպանելու։ Նա վկայել է, որ Չէխոսլովակիայում դեռեւս կան հայ գերիներ, որոնք ծանր դրութեան մէջ են եւ փափագում են հայրենիք վերադառնալ։ Ամատունին բարձրացրել է նաեւ Չէխոսլովակիայում Հայաստանի հիւպատոս ունենալու խնդիրը։ Նոյն բովանդակութեամբ նամակ, 1920ի Սեպտեմբերի 16ին, գրել է Արտգործնախարար Օհանջանեանին։ Պրահայում Հայաստանի հիւպատոս ունենալու հարցով պետական ատեաններին դիմել են նաեւ Աթաբեկեանը եւ Գ. Տէր-Պետրոսեանը։

Եւ չնայած նշուած անձանց տեղեկացուել է, որ դեռեւս վաղաժամ է Չէխոսլովակիայում հայկական հիւպատոս ունենալը (դեռ չեն ճշտուած այդ երկրի հետ Հայաստանի տնտեսական շահերը, չկան կանոնաւոր դիւանագիտական յարաբերութիւններ), 1920ի Հոկտեմբերի 30ին Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործերի Նախարարութիւնը

հայազգի դոկտոր, արեւելագէտ, հանրային գործիչ Ջէյմս Գրինֆիլդին (1873-1939) նշանակել է Գերմանիայի, Աւստրիայի, Հունգարիայի, Չէխոսլովակիայի եւ Լեհաստանի հիւպատոս[26]: Սակայն մէկ ամիս անց Հայաստանում հաստատուել են խորհրդային կարգեր, եւ հայ-չէխական պետական կապերի զարգացումն ունեցել է բոլորովին այլ ընթացք:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Անկախ Չէխոսլովակիայի հռչակման վերաբերեալ առաջին թղթակցութիւններից մէկը հայ մամուլում տե՛ս՝ Գուրգէն Թահմազեան, «Կլէմանսօն Եւ Հայաստանը, Նուպար Փաշային Նամակը Ֆրանսացի Վարչապետին, Իւգօ-Սլաւները Եւ Չէխօ-Սլօւակները», *Երիտասարդ Հայաստան*, 21.08.1918: «*Հիւս. Կովկասի թերթերը հաղորդում են, որ Չէխիայի անկախութիւնը օրերի խնդիր է: Պրոֆ. Մասարիկը դաշնակիցների հաւանութեամբ Պրագայում գումարում է չէխական պարլամենտ: Խօսւում է, որ Կրամարժը լինելու է կառավարութեան նախագահ*» («Չէխական Պարլամենտ», *Մշակ*, 23.01.1919. նաեւ՝ «Չէխ-Սլօվակների Պահանջը», *Մշակ*, 9.02.1919): Աւելի ուշ, 1920ին Երեւանի *Յառաջ* օրաթերթը Փարիզի թերթերից արտատպելով հրատարակել է Չէխոսլովակիայի սահմանադրութեան նախագծի հիմնական կէտերը:

[2] «Պաշտօնական», *Ազգ*, 31.10.1918: Նոյնը տե՛ս՝ «Պաշտօնական Զեկոյց», *Երիտասարդ Հայաստան*, 2.11.1918:

[3] Նոյն:

[4] Տե՛ս, օրինակ՝ Նուրհան, «Օրինակ Առնենք Չէխօ-Սլօվաքներէն», *Պահակ*, 13.09.1918:

[5] Նոյն:

[6] Յովհ. Յակոբեան, «Անկախ Չէխօ-Սլօվաքիա. Նոր Ազգի Մը Կազմաւորումը. Ազատագրուած Ժողովրդի Մը Արժանաւոր Առաջնորդը», *Վերջին Լուր*, 7.05.1921:

[7] Ս. Սապահ-Գիւլեան, «Մեր Բարեկամների Պաշտպանողականների Առթիւ», *Երիտասարդ Հայաստան*, 26.10.1918:

[8] *Վերածնունդ*, թիւ 21-22, 14.11.1918, էջ 445:

[9] Mikayel Tumanyan, *Diplomaticheskaya Istoriya Respubliki Armeniya 1918-1920 gg.* (Հայաստանի Հանրապետութեան դիւանագիտական պատմութիւն), Երեւան, Հայաստանի Ազգային Արխիւ, 2012, էջ 180-181:

[10] Դիանա-Աղաբէգ Աբգար, «Նամակ Խմբագրութեան», *Երիտասարդ Հայաստան*, 25.01.1919:

[11] Լիպարիտ Նազարեանց (1868-1947), բանաստեղծ, հրապարակագիր, իրաւաբան, հանրային գործիչ:

[12] Յակոբ Զաւրիեւ (1865-1920), բժիշկ, ազատագրական շարժման գործիչ:

[13] Լեւ Տրոցկի (1879-1940), Խորհրդային Ռուսաստանի կուսակցական եւ պետական գործիչ:

[14] Լ. Ն., «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Եւ Խորհրդային Իշխանութեան Միջեւ Համաձայնութեան Փորձեր», *Դրօշակ*, Օգոստոս-Սեպտեմբեր, 1928, էջ 232:

[15] Փրոֆ. Ն. Ա. Մարտիրոսեան, «Հայաստան Եւ Չէխաստան», *Ճակատամարտ*, 25.07.1920:

[16] «Չէխօ-Սլովակիայի Պատգամաւորութիւնը», *Յառաջ*, 15.09.1920:

[17] «Լրատու», *Յառաջ*, 16.09.1920:

[18] «Լրատու», *Յառաջ*, 17.09.1920:

[19] «Չէխօ-Սլովակիայի Ներկայացուցիչները 'Յառաջի' Խմբագրատանը», *Յառաջ*, 30.09.1920:

[20] Χ., «Չէխօ-Սլովակները Հայաստանում», *Յառաջ*, 18.09.1920:

[21] Հայաստանի սպառողական ընկերութեան յապաւումը:

[22] Պ. Ղարախանեան, «Կոոպերատիւ Խորհրդակցութիւն», *Յառաջ*, 19.09.1920:

[23] Հայաստանի Ազգային Արխիւ, ֆոնդ 114, ցուցակ 1, գործ 111, թ. 11-13:

[24] Ա., «Չէխօ-Սլովակիայի Պատուիրակները Մեկնեցին», *Յառաջ*, 9.10.1920. նաեւ՝ «Առեւտրական Դաշինք Չէխօ-Սլովաքիոյ Հետ», *Ճակատամարտ*, 7.11.1920:

[25] Խաչատր (sic) Յովհաննէսենց, «Հայկ. Հանրապետութեան Ներկայացուցիչը Սիբիրում Եւ Ծայր. Արեւելքում», *Ասպարէզ*, 4.06.1920:

[26] Richard G. Hovannisian, *The Republic of Armenia, vol. III*, University of California Press, 1996, էջ 391:

THE FIRST CONTACTS BETWEEN THE REPUBLICS OF ARMENIA AND CZECHOSLOVAKIA (1918-1920) (SUMMARY)

ARTSVI BAKHCHINYAN
artsvi@yahoo.com

In 1918 both Armenia and Czechoslovakia proclaimed independence. The Armenian National Union of USA congratulated the temporary government of Czechoslovaklia. The Armenian press drew parallels between these two newly emerged republics and their nations. They noted that both nations had suffered under the yoke of the Austro-Hungarians and Ottoman Turks.

Czechoslovakia was the first state to take a practical step toward establishing economic contacts with the Republic of Armenia. Indeed, in Autumn 1920 the Czechoslovak Central Economic Committee sent two of its delegates to Armenia for a fact finding mission regarding the economic potential and natural resources of the country. In October 1920 the Republic of Armenia nominated a consul in five European states, including Czechoslovakia, but the prospects of deepening the relations ended with the sovietization of Armenia.